

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԱՄ ԲԸԱՀ-ԱՇՁԲ-14/0-1

ք. Արմավիր

«_31_» _մայիսի_ 2014 թ.

«ՀՀ Արմավիրի մարզպետարանը», ի դեմս մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փ.Կարապետյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էլեկտրոննախագիծ» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Մանուկյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ Արմավիրի մարզի «Արագափ համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգում», «Երասխահուն համայնքի միջնակարգ դպրոցի ուժեղացում», «Արմավիր համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգում» և «Մեծամոր համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգում» օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) Նախագծման համար հիմք հանդիսացած նյութերի տեխնիկական բնութագրերը կազմել <Գնումների մասին> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, մեքենասարքավորումներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) Պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

Նախատեսվում է նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքների գնման դեպքում/:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Աշխատանքի կատարման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 6 710 000 (վեց միլիոն յոթ հարյուր տաս հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում.

Չափաբաժին N1 - ՀՀ Արմավիրի մարզի <<Արագածի համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգում>> օբյեկտի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ՝ 1 550 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

Չափաբաժին N2 - ՀՀ Արմավիրի մարզի <<Երասխահուն համայնքի միջնակարգ դպրոցի ուժեղացում >> օբյեկտի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ՝ 2 370 000 (երկու միլիոն երեք հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

Չափաբաժին N3 - ՀՀ Արմավիրի մարզի <<Արմավիր համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգում>> օբյեկտի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ՝ 1 400 000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

2 ակաբաժին N4 - ՀՀ Արմավիրի մարզի «Վեժմանոր համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի տակըների վերանորոգում» օբյեկտի նախագծանախաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ՝ 1 390 000 (մեկ միլիոն երեք հարյուր հստուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարոյի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, ստույգները և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարոյն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարոյի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հաճնաձև-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 րանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014 թ. դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՐՄԵՐԻ ՊԱՏԱՍԻԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գեժման ժամանակացույցին չիանպատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո անբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ներթափա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ներթափա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շերտմներ առաջանալու դեպքում նախագծան ու փորձաքննություն իրականացրած անձինք պատվիրատուին վճարում են տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շերտման և (կամ) դրա հետևանքով առաջացած կրոստի չափով: Ընդ որում՝

ա. շերտմ է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի քսան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին:

բ. կրոստոս են համարվում նախագծային այնպիսի շերտմները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդան, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կրոստի և սկզբնական նախագծի քսան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ներթափա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՆԱՂՁԱՆՔԱՐԵԼԻ ՌԻՐԻ ԱԶՐԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐԱ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհարգաիրենի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պատասխանատվությունից, եթե դա եղել է անհարգաիրենի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրիեղելը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործարարները, հարդրայինության միջոցների աշխատանքի

դարպրեցումը, պետական մայրմիսների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅՈՒ ՊԱՅԱՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կերձ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հարցող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կիանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրության սահմանված կարգով փոփոխուցնել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխարարած համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կիանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխարարած համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրության սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հարկվացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխարարած համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրության սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հարկվացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ծեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից ամսվաի գործունների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

*** Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանինը տոկոսը, ապա՝

1) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է Պատվիրատուի համաձայնությամբ:

2) Կատարողն է պատասխանատու փոխություն կրում գործակալի պարտավորությունների համար:

Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը ցանալը պայմանագրի կողմի առաջարկության արկայության դեպքում պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու՝

ՀՀ Արմավիրի մարզպետարան
ք. Արմավիր, Արուսյան 71
հ/հ 900331131079
Արմավիրի ՏԳԲ
ՀՎՀՀ 04415276


Վ. Ս. Վարդանյան

Կ.Տ.




Կ ա տ ա ղ ո ղ՝

«Էլեկտրոննախագիծ» ՓԲԸ
ք. Երևան Հայաբյան- 41ա
հ/հ 247010001227
«Արդշինինվեստ բանկ»

ՀՎՀՀ 01220923


Ա. Մանուկյան



Չափաբաժին N1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Արմավիրի մարզի Արագածի համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների

1	Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիրը	Գոյություն ունեցող դպրոցի երկհարկանի /36.8x36.8.9/մ ընդհանուր եզրաչափերով ուսումնական մասնաշենքի վերանորոգում՝ սեյսմազինվածության ավելացմամբ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում՝ «ՀՇՆ II-6.02-2006 <Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր> և «ՀՇՆ I-4.02-99 <Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում: Հիմնական դրույթներ> նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:
2	Ճարտարապետահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներ՝ ըստ ոլորտային հատկանիշների	Դպրոցի երկհարկանի /36.8x36.8.9/մ ընդհանուր եզրաչափերով ուսումնական մասնաշենքի վերանորոգում՝ սեյսմազինվածության ավելացմամբ: միջնակարգ կրթության համակարգի արդի պահանջների ապահովում՝ «Կառավարության 13.12.2007թ թիվ 1490-Ն որոշմամբ հաստատված նորմատիվներին համապատասխան:
3	Նախագծի տեսակը	21.03.2014թ թիվ 16/76 «Հայսեսմշին և ԿՊԳՀԻ» ԲԲԸ շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ մասնագիտական եզրակացությունների համաձայն նախագծման ենթակա ծավալների չափագրում, աշխատանքային նախագծի կազմում՝ «Զաղչին նախարարի 29.11.2006 N273-Ն հրամանի համաձայն: Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում համակարգչային ծրագրով՝ կոնստրուկտիվ համակարգի համակարգչային հաշվարկի ապահովմամբ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի փորձաքննության ապահովում՝ «Կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 812, «Կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի թիվ 711-Ն և «Կառավարության 1999 թվականի մարտի 30-ի թիվ 193 որոշումներին համապատասխան:

4	Նախագծի կազմը	Աշխատանքային նախագծի կազմում շինաշխատանքների կազմակերպման նախագծի մշակում լուրջ, օբյեկտային ու ամփոփ նախահաշիվներ, ծավալաթերթ՝ յուրաքանչյուրը 4-ական օրինակ՝ կրիչով և փաստաթղթային տարբերակներով:
5	Այլ պահանջներ	<p>Սահմանված կարգով տեխնիկական պայմանների ստացում: Նախագծի համաձայնեցում շահագործողի և համայնքի ղեկավարի հետ: Անհրաժեշտության դեպքում նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում ինժեներակրթական հետազննության եզրակացության ձեռքբերում:</p> <p>Շինանյութերի և կոնստրուկցիաների գնահատում ՀՀ ֆինանսների նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակվող համապատասխան տեղեկագրի համաձայն:</p> <p>Նախագծում և Ծավալաթերթում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում :</p>
Աշխատանքի կատարման ժամկետը		
	սկիզբը	ավարտը
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 10-րդ օրացուցային օրը ներառյալ:

Չափաբաժին N2

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Արմավիրի մարզի Երասխահուն համայնքի միջնակարգ դպրոցի ուժեղացման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների

1	Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիրը	Գոյություն ունեցող դպրոցի երկհարկանի /12.8x54.9/մ ² մակերեսով ուսումնական մասնաշենքի ուժեղացման և վերականգնման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում՝ ՀՀՇՆ II-6.02-2006 <Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր> և ՀՀՇՆ I-4.02-99 <Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում: Հիմնական դրույթներ> նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:
2	Ճարտարապետահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներ՝ ըստ ոլորտային հատկանիշների	Երկհարկանի /12.8x54.9/մ ² մակերեսով ուսումնական մասնաշենքի ուժեղացում և վերականգնում միջնակարգ կրթության համակարգի արդի պահանջների ապահովում՝ ՀՀ կառավարության 13.12.2007թ թիվ 1490-Ն որոշմամբ հաստատված նորմատիվներին համապատասխան:
3	Նախագծի տեսակը	28.08.2013թ թիվ 10-3/306 <Հայեյսմշին և ԿՊԳՀ> ԲԲԸ շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ մասնագիտական եզրակացությունների համաձայն նախագծման ենթակա ծավալների չափագրում, աշխատանքային նախագծի կազմում՝ ՀՀ քաղաքի նախարարի 29.11.2006 N273-Ն հրամանի համաձայն: Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում համակարգչային ծրագրով՝ կոնստրուկտիվ համակարգի համակարգչային հաշվարկի ապահովմամբ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի փորձաքննության ապահովում՝ ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 812, ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի թիվ 711-Ն և ՀՀ կառավարության 1999 թվականի մարտի 30-ի թիվ 193 որոշումներին համապատասխան:

4	Նախագծի կազմը	Աշխատանքային նախագծի կազմում շինաշխատանքների կազմակերպման նախագծի մշակում լուրջ, օբյեկտային ու ամփոփ նախահաշիվներ, ծավալաթերթ՝ յուրաքանչյուրը 4-ական օրինակ՝ կրիչով և փաստաթղթային տարբերակներով:
5	Այլ պահանջներ	<p>Սահմանված կարգով տեխնիկական պայմանների ստացում: Նախագծի համաձայնեցում շահագործողի և համայնքի ղեկավարի հետ: Անհրաժեշտության դեպքում նախագծանախահաշիվային փաստաթղթերի մշակման համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում ինժեներներկրարանական հետազննության եզրակացության ձեռքբերում:</p> <p>Շինանյութերի և կոնստրուկցիաների գնահատում ՀՀ ֆինանսների նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակվող համապատասխան տեղեկագրի համաձայն:</p> <p>Նախագծում և Ծավալաթերթում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում :</p>
Աշխատանքի կատարման ժամկետը		
	սկիզբը	ավարտը
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 10-րդ օրացուցային օրը ներառյալ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Արմավիրի մարզի Արմավիր համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների

1	Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիրը	Արմավիր քաղաքային համայնքի Սայաթ-Նովա 23 և Մաշտոցի 3 ^ա բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների իրականացում «ՀՇՆ 11-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր» և «ՀՇՆ 1-4.02-99 «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում: Հիմնական դրույթներ» նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:
2	Ճարտարապետահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներ՝ ըստ ոլորտային հատկանիշների	Արմավիր քաղաքային համայնքի Սայաթ-Նովա 23 և Մաշտոցի 3 ^ա բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների իրականացում՝ արդի պահանջների ապահովմամբ:
3	Նախագծի տեսակը	Նախագծման ենթակա ծավալների չափագրում, աշխատանքային նախագծի կազմում՝ «Քաղշին նախարարի 29.11.2006 N273-Ն հրամանի համաձայն: Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում համակարգչային ծրագրով՝ կոնստրուկտիվ համակարգի համակարգչային հաշվարկի ապահովմամբ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի փորձաքննության ապահովում՝ «Կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 812, «Կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի թիվ 711-Ն և «Կառավարության 1999 թվականի մարտի 30-ի թիվ 193 որոշումներին համապատասխան:
4	Նախագծի կազմը	Աշխատանքային նախագծի կազմում շինաշխատանքների կազմակերպման նախագծի մշակում լոկալ, օբյեկտային ու ամփոփ նախահաշիվներ, ծավալաթերթ՝ յուրաքանչյուրը 4-ական օրինակ՝ կրիչով և փաստաթղթային տարբերակներով:
5	Այլ պահանջներ	Նախագծի համաձայնեցում համայնքի ղեկավարի հետ: Շինանյութերի և կոնստրուկցիաների գնահատում «Ֆինանսների նախարարության

		<p>«Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակվող համապատասխան տեղեկագրի համաձայն: Նախագծում և Ծավալաթերթում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում :</p>
Աշխատանքի կատարման ժամկետը		
	սկիզբը	ավարտը
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 10-րդ օրագուցային օրը ներառյալ:

Չափաբաժին N4

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ



ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների

1	Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիրը	Մեծամոր քաղաքային համայնքի 21 և 22 բազմաբնակարան բնակելի շենքերի ներքին ջրահեռացմամբ տանիքները լանջավորի վերափոխման և վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների իրականացում ՀՀՇՆ 11-6.02-2006 <Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր> և ՀՀՇՆ 1-4.02-99 <Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում: Հիմնական դրույթներ> նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:
2	Ճարտարապետահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներ՝ ըստ ոլորտային հատկանիշների	Մեծամոր քաղաքային համայնքի 21 և 22 բազմաբնակարան բնակելի շենքերի ներքին ջրահեռացմամբ տանիքները լանջավորի վերափոխման և վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների իրականացում՝ արդի պահանջների ապահովմամբ:
3	Նախագծի տեսակը	Նախագծման ենթակա ծավալների չափագրում, աշխատանքային նախագծի կազմում՝ ՀՀ քաղշին նախարարի 29.11.2006 N273-Ն հրամանի համաձայն: Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում համակարգչային ծրագրով՝ կոնստրուկտիվ համակարգի համակարգչային հաշվարկի ապահովմամբ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի փորձաքննության ապահովում՝ ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 812, ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի թիվ 711-Ն և ՀՀ կառավարության 1999 թվականի մարտի 30-ի թիվ 193 որոշումներին համապատասխան:

4	Նախագծի կազմը	Աշխատանքային նախագծի կազմում շինաշխատանքների կազմակերպման նախագծի մշակում լոկալ, օբյեկտային ու ամփոփ նախաիաշիվներ, ծավալաթեղթ՝ յուրաքանչյուրը 4-ական օրինակ՝ կրիչով և փաստաթղթային տարբերակներով:
5	Այլ պահանջներ	Նախագծի համաձայնեցում համայնքի ղեկավարի հետ: Շինանյութերի և կոնստրուկցիաների գնահատում <<Ֆինանսների նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հղապարակվող համապատասխան տեղեկագրի համաձայն: Նախագծում և Ծավալաթեղթում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստովածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում :
Աշխատանքի կատարման ժամկետը		
	սկիզբը	ավարտը
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 10-րդ օրացուցային օրը ներառյալ:



Պատվիրատու՝

<< Արմավրի մարզպետարան
 ք. Արմավիր, Արովան 71
 հ/հ 900331131079
 Արմավրի ՏԳԲ
 <<ՎՀՀ 04445276>


 Փ. Վարդապետյան
 Կ.Տ.


Կ ա տ ա ր ո ղ՝

<<Էլեկտրոննախագիծ>>ՓԲԸ
 ք.Երևան <ալարյան- 41ա
 հ/հ 247010001227
 <<Արդշինխվեստ քանկ>>

<<ՎՀՀ 01220923

 Ա. Մանուկյան


ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*



«Ն դրամ

N	Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2014 թ.' ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	«Ն Արմավիրի մարզի Արազափ համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների					1 550 000	1 550 000	1 550 000	1 550 000	1 550 000	1 550 000	1 550 000	1 550 000	1 550 000
2	«Ն Արմավիրի մարզի Երասխահուն համայնքի միջնակարգ դպրոցի ուժեղացման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների					2 370 000	2 370 000	2 370 000	2 370 000	2 370 000	2 370 000	2 370 000	2 370 000	2 370 000
3	«Ն Արմավիրի մարզի Արմավիր համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների					1 400 000	1 400 000	1 400 000	1 400 000	1 400 000	1 400 000	1 400 000	1 400 000	1 400 000
4	«Ն Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների					1 390 000	1 390 000	1 390 000	1 390 000	1 390 000	1 390 000	1 390 000	1 390 000	1 390 000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ածողական կարգով:

Պատվիրատու՝



«Ն Արմավիրի մարզպետարան
 ք. Արմավիր, Արուսյան 71
 հ/հ 900331131079
 Արմավիրի ՏԳԲ
 ՀՎՀՀ 04415278

 Փ. Կարապետյան


Կ ա տ ա թ ո ղ՝

«Էլեկտրոննախագիծ» ՓԲԸ
 ք. Երևան Հալաբյան-41ա
 հ/հ 247010001227
 «Արդշինինվեստ բանկ»

ՀՎՀՀ 01220923

 Ա. Մանուկյան


Կատարող

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

<< _____ >> << _____ >> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ << _____ >> << _____ >> 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս _____ և Կատարողը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը _____ 20 թ-ից _____ 20 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

ստորագրություն

Աշխատանքը ընդունեց

ստորագրություն

Ազգանուն, Անուն

Կ.Տ.

Ազգանուն, Անուն

Կ.Տ.